

Սեպտեմբերի 15-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

11/09/11թ. «Փյունիկ-94»-«Ֆուրման-94» խաղին «Ֆուրման-94» թիմի ֆուտբոլիստ Վահե Եղիազարյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Ֆուրման Աբրահամյան» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

09/09/11թ. «ԱՖԴ-95»-«ՎՖԴ-Թալգրիգ-95» խաղին «ԱՖԴ-95» թիմի ֆուտբոլիստ Հրանտ Համբարյանի հեռացման, մրցակցին միտումնավոր ոտքով հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ որակազրկել 3 խաղով, Արթիկի մանկապատանեկան ֆուտբոլի մարզադպրոցին տուգանել 20000 դրամ:

09/09/11թ. «ԱՖԴ-95»-«ՎՖԴ-Թալգրիգ-95» խաղին «ՎՖԴ-Թալգրիգ-95» թիմի ֆուտբոլիստ Հենրիկ Մալյանի հեռացման, մրցակցին միտումնավոր ոտքով հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, Վանաձորի ֆուտբոլի դպրոցին տուգանել 10000 դրամ:

09/09/11թ. «ԱՖԴ-95»-«ՎՖԴ-Թալգրիգ-95» խաղին «ՎՖԴ-Թալգրիգ-95» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Սարգսյանի հեռացման, մրցակցին միտումնավոր ձեռքով հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ որակազրկել 3 խաղով, Վանաձորի ֆուտբոլի դպրոցին տուգանել 15000 դրամ:

09/09/11թ. «Աչաջուր-95»-«Փյունիկ-2-95» խաղին «Աչաջուր-95» թիմի ֆուտբոլիստ Արայիկ Դավթյանի հեռացման (առանց գնդակ մրցակցին միտումնավոր ոտքով հարվածելու) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Աչաջուր» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

08/09/11թ. «Իմպուլս-98»-«Արամուս-98» խաղի նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության ներկայացուցչի չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ «Էրեբունի-Դիլիջան» մարզական ակումբին տուգանել 5000 դրամ:

1. 11/09/11թ. «Ալաշկերտ-94»-«Միկա-94» խաղն անավարտ մնալու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ-94» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, Մարտունու քաղաքապետարանին տուգանել 20000 դրամ:

2. ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Մարտունու քաղաքային մարզադաշտը որակազրկել 2 խաղով: «Ալաշկերտ-94» թիմի տնային խաղերը անցկացնել ոչ պակաս 50 կմ հեռավորության վրա:

13/09/11թ. «ԱՖԴ-97»-«Սիսիան-97» խաղի նախախաղային խորհրդակցությանը «Սիսիան-97» թիմի ներկայացուցչի չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ Սիսիանի քաղաքապետարանին տուգանել 5000 դրամ:

09/09/11թ. «Գանձասար-95»-«Բանանց-95» խաղի տեղափոխման մասին գրությունը ՀՀՖ ներկայացնելու ժամկետը խախտելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն՝ «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

14/09/11թ. «Փյունիկ-1-99»-«Նաիրի-99» խաղին պաշտոնատար անձի բացակայության պատճառով, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ «Նաիրի-99» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Նաիրի» մարզական տուգանել 10000 դրամ: